

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 1998 թվականի նոյեմբերի 20-ի 98/84/ԵՀ
ՀՐԱՀԱՆԳ**

**Պայմանական մուտքի վրա հիմնված կամ պայմանական մուտքից բաղկացած
ծառայությունների իրավական պաշտպանության մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և,
մասնավորապես, դրա 57(2), 66 և 100ա հոդվածները,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը(2),

գործելով Պայմանագրի 189բ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (3),

1) քանի որ Համայնքի նպատակները, Պայմանագրում սահմանված կարգով, ներառում են
Եվրոպայի ժողովուրդների միջև առավել սերտ միության ստեղծում և տնտեսական ու
սոցիալական առաջընթացի ապահովում՝ վերացնելով նրանց բաժանող խոչընդոտները,

2) քանի որ միջսահմանային հեռարձակումն ու տեղեկատվական հասարակության
ծառայությունների մատուցումը՝ որպես հիմնարար իրավունք, կարող է նպաստել ազատ
արտահայտվելու իրավունքի լիարժեք արդյունավետությանը՝ անհատական տեսանկյունից,
իսկ համընդհանուր տեսանկյունից՝ Պայմանագրով սահմանված նպատակների
իրականացմանը,

3) քանի որ Պայմանագիրը նախատեսում է վճարման դիմաց տրամադրվող բոլոր
ծառայությունների ազատ տեղաշարժ, և քանի որ այդ իրավունքը, երբ կիրառվում է
հեռարձակման և տեղեկատվական հասարակության ծառայությունների նկատմամբ,
Համայնքի իրավունքում առավել ընդհանուր սկզբունքի կոնկրետ դրսևորում է, այն է՝ ազատ
արտահայտվելու իրավունքի, որն ամրագրված է «Մարդու իրավունքների և հիմնարար
ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածում,
և քանի որ այդ հոդվածը, անկախ սահմաններից, հստակ ճանաչում է տեղեկատվություն
ստանալու և տեղեկատվություն տարածելու քաղաքացու իրավունքը, և քանի որ այդ

իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է հենվի այլ օրինական շահերի պատշաճ ուսումնասիրման վրա, որոնք նույնպես իրավական պաշտպանության կարիք ունեն,

4) քանի որ Հանձնաժողովը լայնածավալ խորհրդակցություն է անցկացրել «Ներքին շուկայում ծածկագրված ծառայությունների իրավական պաշտպանության մասին» Կանաչ փաստաթղթի հիման վրա, և քանի որ վերոհիշյալ խորհրդակցության արդյունքում հաստատվել է, որ անհրաժեշտ է մշակել Համայնքի իրավական փաստաթուղթ, որը կապահովի բոլոր այն ծառայությունների իրավական պաշտպանությունը, որոնց դիմաց կատարվող վճարումը պայմանավորված է պայմանական մուտքով,

5) քանի որ Եվրոպական պառլամենտը «Կանաչ փաստաթղթի մասին» 1997 թվականի մայիսի 13-ի որոշման մեջ կոչ է արել Հանձնաժողովին հրահանգի նախագիծ ներկայացնել, որը կընդգրկի բոլոր ծածկագրված ծառայությունները, որոնց մատուցման ընթացքում ծածկագիր է կիրառվում՝ ապահովելու վճարումը, ինչպես նաև համաձայնություն է ձեռք բերվել, որ վերոհիշյալ փաստաթուղթը պետք է ընդգրկի նաև տեղեկատվական հասարակության հեռահար ծառայությունները, որոնք մատուցվում են էլեկտրոնային միջոցներով և ծառայություն ստացողի անհատական խնդրանքով, ինչպես նաև՝ հեռարձակման ծառայությունները,

6) քանի որ թվային տեխնոլոգիաների միջոցով առաջարկվող հնարավորությունները ապահովում են ընդլայնվող սպառողական ընտրության ներուժ և նպաստում մշակութային բազմակարծության ձևավորմանը՝ ապահովելով առավել լայնածավալ ծառայությունների շրջանակ՝ Պայմանագրի 59-րդ և 60-րդ հոդվածների իմաստով, և քանի որ նման ծառայությունների կենսունակությունը հաճախ պայմանավորված է պայմանական մուտքի կիրառումից՝ ծառայություն մատուցողի վճարումը ստանալու նպատակով, և քանի որ, համապատասխանաբար, ծառայություն մատուցողների իրավական պաշտպանությունը ապօրինի սարքերի կիրառումից, որոնք նման ծառայություններից օգտվելը դարձնում են անվճար, անհրաժեշտ է նման ծառայությունների տնտեսական կենսունակությունը երաշխավորելու համար,

7) քանի որ այդ հարցի կարևորությունը ճանաչվել է «Եվրոպական նախաձեռնությունը էլեկտրոնային առևտրում» Հանձնաժողովի հաղորդակցությամբ,

8) քանի որ Պայմանագրի 7ա հոդվածի համաձայն՝ ներքին շուկան մի տարածք է, որը չունի ներքին սահմաններ, որտեղ երաշխավորված է ծառայությունների և ապրանքների ազատ տեղաշարժը, և քանի որ Պայմանագրի 128(4) հոդվածի պահանջն է, որպեսզի

Հանձնաժողովը հաշվի առնի մշակութային հայեցակետերը Պայմանագրի այլ դրույթներին համապատասխան իրականացվող գործողությունների ընթացքում, և քանի որ Պայմանագրի 130(3) հոդվածի միջոցով Համայնքը պետք է նպաստի արդյունաբերության մրցունակության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելուն՝ իր կողմից տարվող քաղաքականությամբ և գործունեությամբ,

9) քանի որ սույն Հրահանգը չի հակասում հնարավոր հետագա Համայնքի կամ ներպետական դրույթները, որոնց նպատակն է ապահովել հանրային շահ ներկայացնող հեռարձակման որոշ ծառայությունների մատուցում՝ չհիմնվելով պայմանական մուտքի վրա,

10) քանի որ սույն Հրահանգը չի հակասում նոր ծառայությունների ուղղությամբ Համայնքի կողմից տարվող գործողությունների մշակութային հայեցակետերին,

11) քանի որ պայմանական մուտքի վրա հենված կամ պայմանական մուտքից բաղկացած ծառայությունների իրավական պաշտպանությանն առնչվող ներպետական կանոնների միջև անհամապատասխանությունը կարող է խոչընդոտներ ստեղծել ծառայությունների և ապրանքների ազատ տեղաշարժի առումով,

12) քանի որ Պայմանագրի կիրարկումը բավարար չէ ներքին շուկայի խոչընդոտները վերացնելու համար, և քանի որ նման խոչընդոտները պետք է վերացվեն՝ անդամ պետությունների միջև իրավական պաշտպանության համապատասխան մակարդակ ապահովելու նպատակով, և քանի որ դա ենթադրում է ապօրինի սարքերին առնչվող առևտրային գործունեության վերաբերյալ ներպետական կանոնների մոտարկում,

13) քանի որ անհրաժեշտ է երաշխավորել, որպեսզի անդամ պետությունները ուղղակի կամ անուղղակի ֆինանսական շահ հետապնդելու նպատակով ապօրինի սարքերի շուկայահանման պարագայում տրամադրեն համապատասխան իրավական պաշտպանություն. նման ապօրինի սարքերի օգտագործումն առանց թույլտվության հնարավոր կամ դյուրին է դարձնում որևէ տեխնոլոգիական միջոցի շրջանցումը, որը ստեղծված է ապահովելու օրինականորեն մատուցված ծառայության դիմաց վճարումը,

14) քանի որ նման առևտրային գործունեությունը, որը վերաբերում է ապօրինի սարքերի օգտագործմանը, ներառում է առևտրային հաղորդակցման տարբեր ձևեր, որոնց մեջ մտնում են գովազդը, ուղղակի շուկայավարման, հովանավորության, վաճառքի խթանման և նման ապրանքների վաճառքը ու ծառայությունների մատուցումը խթանող հանրային կապերի բոլոր ձևերը,

15) քանի որ նման առևտրային գործունեությունը կորստաբեր է սպառողների համար, որոնց մոլորության մեջ են գցում ապօրինի սարքի արտադրության հարցում, և քանի որ անհրաժեշտ է ապահովել սպառողների շահերի պաշտպանության բարձր մակարդակ՝ սպառողի նկատմամբ նման կեղծարարության դեմ պայքարելու համար, և քանի որ Պայմանագրի 129ա (1) հոդվածը սահմանում է, որ Համայնքը պետք է նպաստի սպառողների շահերի պաշտպանության բարձր մակարդակի հաստատմանը՝ ձեռնարկելով միջոցներ՝ 100ա հոդվածին համապատասխան,

16) քանի որ միասնական տեսալսողական տարածք ստեղծելու նպատակով համապատասխան իրավական դաշտը, որը սահմանված է «Հեռուստատեսային հեռարձակման ուղղությամբ գործողությունների ձեռնարկման մասին օրենքով, կանոնակարգով կամ վարչական ակտով սահմանված որոշ դրույթների համակարգման մասին» Խորհրդի 1989 թվականի հոկտեմբերի 3-ի 89/552/ԵՏՀ հրահանգով, պետք է լրացվի սույն Հրահանգով սահմանված պայմանական մուտքի կիրառման տեխնիկայի վերաբերյալ հղումով, որպեսզի ապահովվի միջսահմանային հեռարձակման մատակարարների նկատմամբ հավասար վերաբերմունք՝ անկախ նրանց գործունեության իրականացման վայրից,

17) քանի որ «Համայնքի իրավունքի միասնական արդյունավետ կիրարկման և ներքին շուկայում Համայնքի իրավունքի խախտման դեպքում կիրառելի պատժամիջոցների վերաբերյալ» Խորհրդի 1995 թվականի հունիսի 29-ի որոշման համաձայն (6), անդամ պետություններից պահանջվում է միջոցներ ձեռնարկել ապահովելու համար, որ Համայնքի իրավունքը կիրառվի նույն արդյունավետությամբ և մանրամասնությամբ, ինչպես կիրառվում է ներպետական իրավունքը,

18) քանի որ Պայմանագրի 5-րդ հոդվածի համաձայն, անդամ պետություններից պահանջվում է ձեռնարկել բոլոր համապատասխան միջոցները՝ երաշխավորելու Համայնքի իրավունքի կիրարկումը և արդյունավետությունը, մասնավորապես ապահովելով, որ ընտրված պատժամիջոցները լինեն արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ, իսկ իրավական պաշտպանության միջոցները՝ տեղին,

19) քանի որ անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի մոտարկումը պետք է սահմանափակվի այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ներքին

շուկայի նպատակներին հասնելու համար՝ համաչափության սկզբունքին համապատասխան՝ սահմանված Պայմանագրի 3բ հոդվածի երրորդ պարբերության համաձայն,

20) քանի որ ապօրինի սարքերի բաշխումը ներառում է ցանկացած միջոցով փոխանցում և նման սարքերի շուկայահանում՝ Համայնքի ներսում ու Համայնքից դուրս շրջանառության նպատակով,

21) քանի որ սույն Հրահանգը չի հակասում որևէ ներպետական դրույթի կիրարկմանը, որը կարող է արգելել ապօրինի սարքերի մասնավոր տիրապետումը, ինչպես նաև չի հակասում Համայնքի մրցակցային, մտավոր սեփականության իրավունքներին վերաբերող կանոնների կիրառմանը,

22) քանի որ պատժամիջոցներ և առևտրային գործունեության խախտման պարագայում իրավական պաշտպանության միջոցներ նախատեսող ներպետական իրավունքը կարող է սահմանել, որ նման գործունեությունը պետք է իրականացվի հստակ պատկերացմամբ և ողջամիտ հիմքով, որ նման սարքերի օգտագործումը ապօրինի է,

23) քանի որ սույն Հրահանգով նախատեսված պատժամիջոցները և իրավական պաշտպանության միջոցները չեն հակասում որևէ այլ պատժամիջոցին կամ իրավական պաշտպանության միջոցին, որի համար ներպետական իրավունքով կարող է դրույթ նախատեսվել, ինչպես օրինակ՝ կանխարգելիչ միջոցներն ընդհանրապես կամ ապօրինի օգտագործվող սարքերի առգրավումը, և քանի որ անդամ պետությունները չեն պարտավորվում քրեական պատժամիջոցներ նախատեսել սույն Հրահանգով կարգավորվող իրավախախտ գործողությունների համար, և քանի որ անդամ պետությունների՝ վնասների փոխհատուցմանը վերաբերող դրույթները պետք է համապատասխանեն իրենց ներպետական օրենսդրական և դատական համակարգերին,

24) քանի որ սույն Հրահանգը չի հակասում այն ներպետական կանոնների կիրարկմանը, որոնք չեն մտնում սույն Հրահանգով կարգավորվող ոլորտի մեջ, ինչպես օրինակ՝ անչափահասների պաշտպանությանն առնչվող կանոնները՝ ներառյալ 89/552/ԵՏՀ հրահանգով սահմանված կանոնները կամ հանրային կարգին կամ հանրային անվտանգությանն առնչվող ներպետական դրույթները,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Գործողության ոլորտը

Սույն Հրահանգի նպատակն է մոտարկել պաշտպանված ծառայություններից օգտվելու չթույլատրված մուտքի հնարավորություն ընձեռող ապօրինի սարքերի օգտագործման դեմ ձեռնարկվող միջոցառումներին առնչվող անդամ պետությունների դրույթները:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակով՝

ա) *պաշտպանված ծառայություն* նշանակում է հետևյալ ծառայություններից որևէ մեկը, եթե այն մատուցվում է վճարման դիմաց՝ պայմանական մուտքի հիմքով.

- հեռուստատեսային հեռարձակում՝ սահմանված 89/552/ԵՏՀ հրահանգի 1(ա) հոդվածով,

- ռադիո հեռարձակում՝ հանրային ընդունման նպատակով ռադիոհաղորդումների լարային կամ եթերային հեռարձակում՝ ներառյալ արբանյակային կապով,

- Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի 98/34/ԵՀ հրահանգի 1(2) հոդվածի իմաստով, որը տեխնիկական չափանիշների, կանոնակարգերի և տեղեկատվական հասարակության ծառայությունների վերաբերյալ կանոնների ոլորտում սահմանում է տեղեկությունների տրամադրման ընթացակարգ.

կամ վերոհիշյալ ծառայություններից օգտվելու պայմանական մուտքի տրամադրում, որը համարվում է առանձին ծառայություն.

բ) *պայմանական մուտք* նշանակում է որևէ տեխնիկական միջոց և (կամ) կարգավորում, որի միջոցով ըմբռնելի ձևաչափով պաշտպանված ծառայությունից օգտվելը պայմանավորված է նախնական անհատական թույլտվությամբ,

գ) *պայմանական մուտքի սարք* նշանակում է որևէ սարք կամ համակարգչային ծրագիր, որը մշակվել կամ հարմարեցվել է պաշտպանված ծառայությունից օգտվելը ըմբռնելի ձևաչափով հնարավոր դարձնելու նպատակով,

դ) *հարակից ծառայություն* նշանակում է պայմանական մուտք ապահովող սարքի տեղադրում, շահագործում կամ փոխարինում, ինչպես նաև առևտրային հաղորդակցման

ծառայությունների մատուցում վերոհիշյալ ծառայությունների կամ պաշտպանված ծառայությունների առումով,

ե) *անօրինական սարք* նշանակում է որևէ սարք կամ համակարգչային ծրագիր, որը մշակվել կամ հարմարեցվել է առանց ծառայություն մատուցողի թույլտվության՝ ըմբռնելի ձևաչափով պաշտպանված ծառայությունից օգտվելու նպատակով,

զ) *սույն Հրահանգով կարգավորվող ոլորտ* նշանակում է որևէ դրույթ, որը վերաբերում է 4-րդ հոդվածով սահմանված իրավախախտ գործունեությանը:

Հոդված 3

Ներքին շուկայի սկզբունքները

1. Յուրաքանչյուր անդամ պետություն միջոցներ է ձեռնարկում՝ արգելելու իր տարածքում 4-րդ հոդվածում նշված գործունեության տեսակների իրականացումը, ինչպես նաև միջոցներ է ձեռնարկում՝ նախատեսելու 5-րդ հոդվածով սահմանված պատժամիջոցները և իրավական պաշտպանության միջոցները:

2. Չհակասելով 1-ին պարբերությանը՝ անդամ պետությունները չեն կարող.

ա) սահմանափակել պաշտպանված ծառայությունների կամ հարակից ծառայությունների մատուցումը, որոնց մատուցումը սկսվել է այլ անդամ պետությունում, կամ

բ) սահմանափակել պայմանական մուտքի սարքերի ազատ տեղաշարժը

սույն Հրահանգի կարգավորման ոլորտին վերաբերող պատճառներով:

Հոդված 4

Իրավախախտ գործունեությունը

Անդամ պետությունները իրենց տարածքում արգելում են գործունեության հետևյալ տեսակները.

ա) ապօրինի սարքերի արտադրությունը, ներմուծումը, բաշխումը, վաճառքը, վարձակալությունը կամ առևտրային նպատակներով տիրապետումը,

բ) ապօրինի սարքերի տեղադրումը, շահագործումը կամ փոխարինումը՝ առևտրային նպատակներով,

գ) առևտրային ուղիներով ապօրինի սարքերի օգտագործման խթանումը:

Հոդված 5

Պատժամիջոցները և իրավական պաշտպանության միջոցները

1. Պատժամիջոցները պետք է լինեն արդյունավետ, տարհամոզիչ և համաչափ իրավախախտ գործունեության հնարավոր ազդեցությանը:

2. Անդամ պետությունները անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ ապահովելու համար, որ պաշտպանված ծառայություններ մատուցողները, որոնց շահերը տուժել են 4-րդ հոդվածում նշված իրավախախտ գործունեությունից, հնարավորություն ունենան օգտվելու իրավական պաշտպանության համապատասխան միջոցներից, ընդ որում՝ կարողանան վնասների հատուցման հայց ներկայացնել, դատական արգելքից կամ կանխարգելիչ այլ միջոցից օգտվել, իսկ, հարկ եղած դեպքում՝ դիմել առևտրային ուղիներից ապօրինի սարքերը հանելու համար:

Հոդված 6

Կիրարկումը

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը մինչև 2000 թվականի մայիսի 28-ը: Նրանք այդ մասին անհապաղ տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են նման ակտեր, դրանք պետք է պարունակեն հղում սույն Հրահանգին կամ իրենց պաշտոնական հրապարակման պահին պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու ձևերը սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում ներպետական իրավունքի դրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 7

Հաշվետվությունները

Սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց երեք տարի անց և դրանից հետո յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ Հանձնաժողովը հաշվետվություն է ներկայացնում Եվրոպական պառլամենտին, Խորհրդին և Տնտեսական ու սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեին սույն Հրահանգի կիրարկման վերաբերյալ՝ հարկ եղած դեպքում՝ կցելով առաջարկներ, մասնավորապես 2-րդ հոդվածի սահմանումների վերաբերյալ՝ տեխնիկական և տնտեսական զարգացումների և Հանձնաժողովի կողմից իրականացվող խորհրդակցությունների լույսի ներքո դրանք համապատասխանեցնելու համար:

Հոդված 8

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու օրը:

Հոդված 9

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1998 թվականի նոյեմբերի 20-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ Խ. Մ. ԽԻԼ-ՌՈՐԼԵՍ

Խորհրդի կողմից՝

Նախագահ Ե. ՀՈՍԱՇ

1) ՊՏ C 314, 16. 10. 1997թ., էջ 7 և ՊՏ C 203, 30. 06. 1998թ., էջ 12:

{0>(2) OJ C 129, 27. 4. 1998, p. 16.<|002) ՊՏ, C 129, 27. 04. 1998թ., էջ 16:<<0}

3) Եվրոպական պառլամենտի 1998 թվականի ապրիլի 30-ի եզրակացություն (ՊՏ C 152, 18.05.1998թ., էջ 59), Խորհրդի 1998 թվականի հունիսի 29-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 262, 19.08.1998թ., էջ 34) և Եվրոպական պառլամենտի 1998 թվականի հոկտեմբերի 8-ի որոշում (ՊՏ C 328, 26.10.1998թ.): Խորհրդի 1998 թվականի նոյեմբերի 9-ի որոշում:

4) ՊՏ, C 167, 02.06.1997թ., էջ 31:

5) ՊՏ L 298, 17.10.1989թ.. էջ 23: Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 97/36/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 202, 30.07.1997թ., էջ 60):

6) ՊՏ, C 188, 22.07.1995թ., էջ 1:

7) ՊՏ թիվ L 204, 21.07.1998թ., էջ 37: 98/48/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 217, 05.08.1998թ., էջ 18):